ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԻՆ

2002 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և «Մարշալ Բաղրամյան» հայրենասիրական-հասարակական կազմակերպության միացյալ գիտաժողովը՝ նվիրված Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստափորի) Բաղրամյանի ծննդյան 105-ամյակին, ինչպես նաև «Հաղթանակի մարշալը. Հ. Ք. Բաղրամյան» (ռուսերեն) գրքի շնորհանդեսը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ–ակադեմիկոս–քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը: Դարերի ընթացքում հայ ժողովուրդը տվել է ոչ միայն դիտության, մշակույթի, արվեստի շնորհաշատ գործիչներ, այլև տաղանդավոր բազմաթիվ զորահրամանատարներ, որոնք, անմնացորդ ծառայելով ժողովրդին ու պետությանը, պաշտպանել են Հայրենիքը, բարձրացրել նրա ռազմական փառքը, ասաց նա: Հայ ժողովրդի ծոցից դուրս եկած ականավոր զորահրամանատարների համաստեղության մեջ ամենապայծառը Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանն է, որը ոչ միայն ականատես է եղել պատմական այնպիսի կարևոր իրադարձությունների, որոնք ճակատագրական նշանակություն են ունեցել հայ ժողովրդի կյանքում, այլև դործուն մասնակցությամբ արժանի ավանդ ներդրել հարազատ ժողովրդին ոխերիմ թշնամիներից փրկելու սուրբ գործում: Մարշալ Բաղրամյանի կենսագիրները միշտ էլ հպարտությամբ են նշել, որ մեծ զորավարը ոչ միայն անցել է փառապանծ մարտական ուղի, մասնակցել առաջին համաշխարհային, քաղաքացիական և Հայրենական մեծ պատերազմներին, շարքային զինվորից հասել զեներալի, ապա մարշալի կոչման, այլև ավարտել է հանրակրթական 3 և զինվորական 6 ուսումնական հաստատություն, այդ թվում Ֆրունզեի անվան և Գլխավոր շտաբի ակադեմիաները, ընդ որում բոլորն էլ գերազանց դնահատականներով: Իր 67 տարվա զինվորական անընդմեջ ծառայության ընթացքում, վերջում ասեց Վ. Բարխուդարյանը, Հովհաննես Բաղրամյանն անցել է մարտական ծառայողական հարուստ ուղի, վարել էսկադրոնի, գնդի, բանակի, ռազմաճակատի հրամանատարի, ԽՍՀՄ զինված ուժերի նախարարի տեղակալի, մի շարք այլ պաշտոններ, որոնք նրան հնարավորություն են տվել ոչ միայն զբաղվել ընթացիկ գործնական, կազմակերպական հարցերով, այլև թողնել գիտական, պատմադրական լուրջ ստեղծադործություններ, որոնք իրենց նշանակությունն ու հրատապությունը պահպանում են մեր օրերում և կպահպանեն նաև ապագայում սերունդների համար:

«Մարշալ Հ. Ք. Բաղրամյանի կյանքն ու գործունեությունը» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի թեմատիկ խմբի

զեկավար, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը: Զեկուցողը բնութագրեց Հովհ. Բաղրամյանին որպես տաղանդավոր զորահրամանատարի, որի անունը ոսկե տառերով է գրվել Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ և արժանի տեղ գրավել խորհրդային ականավոր այնպիսի զորավարների շարքում, ինչպիսիք են Խորհրդային Միության մարշալներ Գ. Կ. Ժուկովը , Ա. Մ. Վասիլևսկին, Կ. Կ. Ռոկոսովսկին, Ի. Ս. Կոնևը, Ռ. Յա. Մալինովսկին, Ա. Ի. Երյոմենկոն, Լ. Ա. Գովորովը, Ֆ. Ի. Տոլբուխինը, որոնք պատերազմի եզրափակիչ շրջանում ռազմաճակատների հրամանատարներ էին և պատմության մեջ մնացել են «Հաղթանակի մարշալներ» անունով: Այնուհետև զեկուցողն հանգամանորեն խոսեց մարշալի անցած մարտական ուղու մասին: Նշեց, որ Բաղրամյանն ակտիվորեն մասնակցել է Սարգարապատի ճակատամարտին, իր արժանի ավանդը ներգրել Հայաստանի առաջին հանրապետության, ապա Խորհրդային Հայաստանի զինված ուժերի կազմավորման ու ամրապնդման գործում, վարել էսկադրոնի, ապա հեծյալ գնդի հրամանատարի պաշտոններ: Զինվորական ծառայությանը զուգընթաց սովորել և դերազանցությամբ ավարտել է Լենինգրադի բարձրագույն հեծելազորային դպրոցը (ապագա մարշալներ՝ Գ. Կ. Ժուկովի, Կ. Կ. Ռոկոսովսկու, Ա. Ի. Երյոմենկոյի հետ), Գլխավոր շտաբին կից բարձրագույն հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացները, Մ. Վ. Ֆրունզեի անվան, ինչպես նաև Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիաները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բաղրամյանը գնդապետից հասել է բանակի գեներալի կոչման, վարել է ռազմաճակատի շտարի պետի, բանակի, ապա ռազմաճակատի հրամանատարի պատասխանատու պաշտոններ, արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչման: Հետպատերազմյան տարիներին բանակի գեներալ Բաղրամյանը շարունակել է իր զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում, վարել Մերձբալթյան զինվորական օկրուգի հրամանատարի, Գլխավոր շտաբի ակադեմիայի պետի, ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ՝ զինված ուժերի թիկունքի պետի, պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչի պաշտոններ: 1955 թ. մարտի 11-ին բանակի գեներալ Հ. Ի. Բաղրամյանին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի, իսկ 1977 թ. դեկտեմբերի 1-ին՝ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:

Հովհ. Բաղրամյանը զգալի աշխատանք է կատարել ոչ միայն զինված ուժերի ամրապնդման գործում, այլև՝ մատաղ սերնդի ռազմահայրենասի-

բական գաստիարակության ասպարեզում: Նա շատ ժամանակ է հատկացրել գիտական, գրական, հետազոտական աշխատանքներին, հրատարակել գրքեր, հոդվածներ, ռազմական պատմության վերաբերյալ դասագրքեր. Հայրենական մեծ պատերազմի պատմությունը լուսաբանող հիմնակազմ աշխատություններ, խորհրդային ականավոր զորահրամանատարների մասին հուշեր: Նրա «Հերոս քաղաքը Դնեպրի ափին», «Այսպես է սկսվել պատերազմը», «Այսպես մենք հասանք հաղթանակի», «Իմ հիշողությունները», «Մեծ ժողովրդի զավակները» և արժեքավոր այլ գրքերը. բացի հայերենից և ռուսերենից թարգմանվել և լույս են տեսել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն ու այլ լեզուներով: Նրա ստեղծագործությունները աչքի են ընկնում խորությամբ, շարագրանքի ինքնուրույնությամբ, փաստերի հավաստիությամբ և իրենց տեսական, գործնական ու պատմական նշանակությամբ մտել են ինչպես ռուսական, այնպես էլ հայկական ռազմապատմական գրականության ոսկե ֆոնդը: Մարշալի ռազմագիտական հարուստ ժառանգությունը այսօր ոչ միայն արժանի է բազմակողմանի ուսումնասիրության, այլև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գեներալների, սպաների ու զինվորների կողմից ընդօրինակման: Այն վիթխարի նշանակություն կունենա հատկապես մատաղ սերնդի ռազմահայրենասիրական գաստիարակության պետական կարևոր նշանակություն ունեցող գործի կազմակերպման խնդրում:

Զինվորական, պետական, հասարակական գործունեության ընթացքում մարշալ Բաղրամյանը մշտապես կապված է եղել հարազատ ժողովրդի հետ, հաճախակի այցելել հայրենիք, հանդիպումներ ունեցել բնակչության լայն խավերի հետ: Նա սերտ բարեկամական կապեր ուներ Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, Խորհրդային Միության ծովակալ Հովհաննես Իսակովի, իր համագյուղացի զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, գիտության, մշակույթի, պետական բազմաթիվ այլ գործիչների հետ:

Հմայիչ մարդու, գիտնականի և ականավոր զորավարի կյանքի թելը, վերջում ասեց զեկուցողը, կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին՝ Մոսկվայում. կառավարության որոշմամբ նրա թաղումը կազմակերպվեց սեպտեմբերի 24-ին՝ Կարմիր հրապարակում, Կրեմլի պարսպի մոտ: Զորավարի անունը հավերժացնելու նպատակով 1983 թ. մայիսի 6-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հայաստանում կազմավորվեց վարչական նոր շրջան, որը կոչվեց Բաղրամյանի անունով: Երևանի քաղխորհրդի գործկոմի որոշմամբ Բարեկամության փողոցը վերանվանվեց Բաղրամյան պողոտա, իսկ մետրոպոլիտենի «Աբովյան» կայարանը՝ «Մարշալ Բաղրամյան»: 1984 թ. աշնանը Կերչի նավաշինարարները կառուցեցին «Մարշալ Բաղրամյան» վիթխարի հեղուկանավը, որը գրանցում գտավ Նովոռոսիյսկի ծովային նավագնացությունում: 1997 թ. Հայաստանի Հանրապետությունում մեծ շուքով նշվեց ականավոր զորավարի ծննդյան 100-ամյակը, հիմնադրվեց «Մարշալ Բաղրամյան» մեդալ, զորավարի անունով կոչվեց Արմավիրի մոտոհրաձգային ուսումնական բրիգա-

գը և այլն: Շուտով կավարտվի մարշալի հուշարձանի կառուցման աշխատանքները. բացումը տեղի կունենա 2003 թ. մայիսի 9-ին:

Անվանի զորավարի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին ՀՀ Նախագահի խորհրդական և ՀՀ ռազմական գլխավոր տեսուչ, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը, գեներալ-մայորներ՝ Խորհրդային Միության հերոս, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի տնօրեն Աշոտ Ամատունին, ՀՀ զինվորական կոմիսար Արտուշ Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարարի օդնական Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), գրքի համահեղինակ, «Մարշալ Բաղրամյան» հայրենասիրական-հասարակական կազմակերպության համանախագահ, գնդապետ Լևոն Ստեփանյանը, Հայրենական մեծ պատերազմի վետերանների խորհրդի նախագահ, գնդապետ Հրանտ Հովհաննիսյանը, պատերազմի վետերաններ՝ գնդապետ Արտեմ Ավանեսովը, մայոր Գևորգ Իսախանյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:

Գիտաժողովը եզրափակեց ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը՝ ներկաներին պատմելով մեծ հային և զորավարին ընութագրող հետևյալ եղելությունը: Մարշալի հայրենի գյուղում՝ Զարդախլուում, զորավարի տուն-թանգարանի բացման արարողության ժամանակ, Ադրբեջանի կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալիևը, որն ուղեկցում էր Հովհ. Բաղրամյանին, անսպասելիորեն հարց է ուղղում մարշալին՝ ասելով. ինչո՞ւ են հայերը ադրբեջանական ժողովրդի ջարդարար ու թշնամի Անդրանիկին համարում ժողովրդական հերոս: Հովհ. Բաղրամյանը, մի պահ հանկարծակի դալով, տալիս է հետևյալ խորիմաստ պատասխանը. «Իր զավակի արժանի բնութագիրը ճիշտ կարող է տալ այն ժողովուրդը, որը ծնել է նրան»:

Գիտաժողովի մասնակիցներին բաժանվեց ականավոր զորավարի ծննդյան 105-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից պոլիգրաֆիական բարձր մակարդակով ու ճաշակով տպագրված «Հաղթանակի մարշալը. Հ. Ք. Բաղրամյան» պատկերազարդ գիրքը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ